ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

07.02.2014թ.
212-ի 5

ՀՀ ֆինանսների նախարար
պարոն Դավիթ Սարգսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնին են դիմել “Դեմ եմ” նախաձեռնության անդամները եւ խնդրել են իրենց օգնել տեղեկատվություն ստանալու հարցում: ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2014թ.-ի հունվարի 24-ի որոշմամբ ՀՀ քաղաքացիները հնարավորություն ստացան չընտրել “Կուտակային կենսաթոշակների մասին” ՀՀ օրենքով սահմանված պարտադիր կուտակային վճարները ղեկավարելու համար ֆոնդ եւ կառավարիչ:

Ուստի, ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ֆոնդ եւ կառավարիչ չընտրած քաղաքացիների համար հաշվարկվող եւ փոխանցվող պարտադիր կուտակային վճարների գումարները որտե՞ղ են պահվելու մինչեւ ՍԴ որոշումը:
2. Ո՞ր իրավական ակտով (ակտերով) է (են) սահմանված մինչեւ ՍԴ որոշումը **ֆոնդ եւ կառավարիչ չընտրած** քաղաքացիների համար հաշվարկվող եւ փոխանցվող գումարները պահելու պայմանները եւ կանոնները:
3. Խնդրում ենք տրամադրել այդ իրավական ակտի (ակտերի) պատճենները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան